

Կ-099-11.04.2019,27.05.2019-ՊԱ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՈՂՎԱԾ 1. Ֆինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին՝ Հայաստանի Հանրապետության 2017 թվականի նոյեմբերի 15-ի ՀՕ-195-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի 8-րդ մասի երկրորդ նախադասությունում Ֆերեք՝ բառը փոխարինել Ֆերկու կամ երեք կամ չորս՝ բառերով:

ՀՈՂՎԱԾ 2. Օրենքի 21-րդ հոդվածի 5-րդ մասը լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

Տույն մասի համաձայն ներկայացված քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու դիմումը կարող է մերժվել Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական մարմնի կողմից՝ սույն մասի համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգում նախատեսված դեպքերում:]:

ՀՈՂՎԱԾ 3. Օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետում Ֆկրթական՝ բառից առաջ լրացնել Ֆկամ միջին մասնագիտական՝ բառերը:

ՀՈՂՎԱԾ 4. Օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասում.

1) առաջին նախադասությունում Ֆգորամասում՝ բառից հետո լրացնել Ֆ, որի դեպքում սույն հոդվածի 1-ին մասի համաձայն իրականացվող վիճակահանությանը մասնակցում է միայն մեկ եղբայրը՝ բառերը.

2) երկրորդ նախադասությունում Ֆամիսը՝ բառից հետո լրացնել Ֆկամ եղբայրը պարտադիր զինվորական ծառայություն է անցնում այնպիսի զորամասում, որտեղ ծառայություն անցնելու համար անհրաժեշտ պայմանները չեն բավարարվում զորակոչվող եղբոր կողմից՝ բառերը:

ՀՈՂՎԱԾ 5. Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում Ֆ36 տարեկան՝ բառերը փոխարինել Ֆ40 տարեկան՝ բառերով, իսկ Ֆհանգամանքից՝ բառից հետո լրացնել Ֆ, ինչպես նաև պահեստազորի շարքային կամ կրտսեր ենթասպայական կազմերում հաշվառված մինչև 45 տարեկան քաղաքացիները՝ զորամասային օդակում ծառայության նշանակվելու դեպքում՝ բառերը:

ՀՈՂՎԱԾ 6. Օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետում Ֆ3-5 տարի՝ բառերը փոխարինել Ֆ2-5 տարի՝ բառերով:

ՀՈՂՎԱԾ 7. Օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասում Ֆհոդվածով՝ բառը փոխարինել Ֆհոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերում ու 4-րդ մասում՝ բառերով:

ՀՈՂՎԱԾ 8. Օրենքի 41-րդ հոդվածում.

1) 1-ին մասի՝

ա. 1-ին կետում Ֆմեկ՝ բառը փոխարինել Ֆերկու՝ բառով.

բ. 2-րդ կետում Ֆմինչև տվյալ գործով վերջնական որոշման կայացվելը՝ բառերը փոխարինել Ֆմինչև ընտրված խափանման միջոցը փոխելու կամ պաշտոնավարության ժամանակավոր դադարեցման որոշումը վերացնելու օրվան հաջորդող 30-րդ օրը՝ բառերով.

2) լրացնել 1.1-ին մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

Ֆ1.1. Սույն օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքում պայմանագրային զինծառայողը պետական լիազոր մարմնի կադրերի (կադրային ստորաբաժանման) տրամադրության տակ թողնվում է երկու ամսից ոչ ավելի ժամկետով:]:

ՀՈՂՎԱԾ 9. Օրենքի 42-րդ հոդվածի 6-րդ մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն.

«Սույն հոդվածի 1-ին մասում սահմանված դեպքերում պայմանագրային զինծառայողին ծառայության նոր վայր տեղափոխելու հրամանի բողոքարկումը, ներառյալ դատական կարգով, չի կասեցնում դրա կատարումը:»:

ՀՈՂՎԱԾ 10. Օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 6-րդ կետերում Ֆզինծառայողը՝ բառից առաջ լրացնել Ֆառկա չէ թափուր այլ զինվորական պաշտոն կամ՝ բառերը:

ՀՈՂՎԱԾ 11. Օրենքի 58-րդ հոդվածի 4-րդ մասի առաջին նախադասությունում Ֆերեք ամիս՝ բառերը փոխարինել Տմեկ տարի՝ բառերով:

ՀՈՂՎԱԾ 12. Օրենքի 61-րդ հոդվածի 14-րդ մասում Տսովորելու հրամանագրված՝ բառերից առաջ լրացնել Տկամ պետական լիազոր մարմնի պատվերով ինտերնատուրայի կրթական ծրագրով՝ բառերը:

ՀՈՂՎԱԾ 13. Օրենքի 65-րդ հոդվածի 2-րդ մասում Տկազմի՝ բառը փոխարինել Տև ավագ ենթասպայական կազմերի՝ բառերով:

ՀՈՂՎԱԾ 14. Օրենքի 72-րդ հոդվածի.

1) 2-րդ մասի 4-րդ կետում Տ64-րդ,՝ բառից հետո լրացնել Տ65-րդ հոդվածի 1-ին մասի,՝ բառերը.

2) 3-րդ մասի առաջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

ՏՀայաստանի Հանրապետության պաշտպանության մասնակցած անձանց մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ տրվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի հրամանով հաշվի առնելով միջգերատեսչական հանձնաժողովի եզրակացությունը:՝:

ՀՈՂՎԱԾ 15. Օրենքի 73-րդ հոդվածի.

1) 6-րդ մասի առաջին նախադասությունում Տսեփականության իրավունքով անհատույց բնակարան՝ բառերը փոխարինել Տբնակարանային պայմանների բարելավում՝ բառերով.

2) 7-րդ մասում Տսեփականության իրավունքով անհատույց բնակարան՝ բառերը փոխարինել Տբնակարանային պայմանների բարելավում՝ բառերով, իսկ Տիրավունքը՝ բառից հետո լրացնել Տ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով՝ բառերը:

ՀՈՂՎԱԾ 16. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՏԵՐԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՏՋինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին՝ Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին՝ ՀՀ օրենքի նախագծի ընդունման

1. Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

Օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է օրենքի գործողության ընթացքում օրենքի կարգավորիչ մի շարք հարաբերություններ հստակեցնելու հանգամանքով:

2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

ՏՋինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին՝ ՀՀ օրենքի (այսուհետ՝ օրենք) ուժի մեջ մտնելուց հետո (16.12.2018թ.), նախկին ՏՋինվորական ծառայություն անցնելու մասին՝ ՀՀ օրենքով սահմանված մի շարք կարգավորումների փոփոխության արդյունքում խնդիրներ են առաջացել պարտադիր զինվորական ծառայության միաժամանակ զորակոչվող եղբայրների և ծառայության մեջ գտնվող եղբայր ունեցող զորակոչիկի ծառայության նշանակման, պայմանագրային զինվորական ծառայության ընդունվելու տարիքի նվազեցման, պայմանագրերի կնքման ժամկետների, կադրերի տրամադրության տակ թողնելու, ակտիվ պահեստագրային ծառայության կազմակերպման, զինծառայողների և հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող զինծառայողների և զոհված (մահացած) զինծառայողների բնակարանային ապահովության իրավունքի, մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ տալու հետ կապված գործընթացներում: Բացի այդ, օրենքը չի նախատեսում միջին մասնագիտական կրթական ծրագրով սովորող անձանց 18 տարին լրանալու դեպքում մինչև ուսումնառության ավարտը տարկետում տալու (առնվազն 19 տարեկանը լրանալը) և ուսումնառությունն ավարտելու հնարավորություն, ինչը որոշակիորեն խնդիր է առաջացնում ՏԿրթության մասին՝ ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջների հետ, ինչպես նաև ամբողջությամբ հստակեցված չեն տարկետումների կամ ազատումների վերաբերյալ ակտերի վերանայման հետ կապված հարաբերությունները:

3. Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը

Բնագավառում իրականացվող քաղաքականության նպատակն է ապահովել պարտադիր զինվորական ծառայության զորակոչի շրջանակներում տարկետումների տրման, պայմանագրային զինվորական ծառայության կազմակերպման գործընթացի պատշաճ կազմակերպումը:

4. Կարգավորման նպատակը և բնույթը

Օրենքի նախագծի համաձայն պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման իրավունք է նախատեսվում միջին մասնագիտական կրթական ծրագրով սովորող և 18 տարին լրանալու օրվա դրությամբ ուսումնառությունը չավարտած անձանց համար՝ մինչև 19 տարեկանը լրանալը, նախատեսվում է Կառավարության որոշմամբ բացառիկ դեպքերում քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու գործընթացում իրավասու պետական մարմնի կողմից քաղաքացու դիմումը մերժելու հնարավորությունը, սահմանվում է, որ պարտադիր զինվորական ծառայության միաժամանակ զորակոչվող եղբայրների կողմից նույն զորամասում ծառայության նշանակվելու ցանկության դեպքում վիճակահանությանը մասնակցում է միայն մեկ եղբայրը, իսկ ծառայության մեջ գտնվող եղբայր ունեցող զորակոչվող եղբոր ծառայության վայր կարող է նշանակվել՝ եթե բավարարում է տվյալ զորամասում ծառայության նշանակվելու պայմաններին (օրինակ՝ առողջական վիճակ, պատվո պահակային վաշտ, նվազախմբեր և այլն) պայմանագրային ծառայությունը հրապարիչ դարձնելու նպատակով հնարավորություն է ընձեռնվում պայմանագիր կնքել նաև 2 տարի ժամկետով, վերականգնվում է նախկինում գործող պայմանագրային զինվորական ծառայության ընդունվելու տարիքը և կադրերի տրամադրության տակ թողնելու ժամկետը, հաստիքների կրճատման կամ կադրերի տրամադրության տակ թողնվելու ժամկետը լրանալու հիմքով պայմանագրային զինվորական ծառայությունից արձակելու հանգամանք է նախատեսվում նաև համապատասխան թափուր պաշտոնի բացակայությունը, պատերազմական ժամանակի հաստիքների կցագրված քաղաքացիների հետ հաստիքով նախատեսված պարտականությունների ներգրավման (ակտիվ պահեստագոր) պայմանագրի ժամկետը սահմանվում է մեկ տարի, բժշկական մասնագիտական կրթություն ունեցող և պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելուց հետո պաշտպանության նախարարության պատվերով ինտերնատուրայի կրթական ծրագրով ուսումնառության գործուղված զինծառայողների կարգավիճակը համապատասխանեցվում է բժշկական բնույթի ռազմաուսումնական հաստատություն ավարտած և ինտերնատուրա հրամանագրված կուրսանտների կարգավիճակին, հնարավորություն է ընձեռնվում մատչելի և երկարաժամկետ հիպոտեկային վարկավորման ծրագրին ընդգրկվել նաև ավագ ենթասպայական կազմի զինծառայողներին, մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ տալու գործընթացը նախատեսվում է իրականացնել միջգերատեսչական հանձնաժողովի կողմից, իսկ այդ կարգավիճակի շնորհումը՝ ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով, զինծառայողների և հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող զինծառայողների և գոհված (մահացած) զինծառայողների բնակարանային ապահովության իրավունքի իրացման շրջանակներում վերացվում է թերկարգավորումը, քանի որ բնակարանային ապահովությունն ընդգրկում է ոչ միայն սեփականության իրավունքով անհատույց բնակարանի տրամադրումը, այլ նաև անհատույց պետական ֆինանսական աջակցության և տնամերձ հողամասով ապահովման ձևերը:

5. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները, անձինք և նրանց դիրքորոշումը

Նախագիծը մշակվել է Պաշտպանության նախարարության կողմից:

6. Ակնկալվող արդյունքը

Օրենքի ընդունումը կապահովի պարտադիր զինվորական ծառայության զորակոչի շրջանակներում տարկետումների կամ ազատումների տրման, պայմանագրային զինվորական ծառայության և պահեստագրային պատրաստության կազմակերպման գործընթացի պատշաճ կազմակերպումը:

7. Այլ տեղեկություններ չկան:

ՏԵՂԵԿԱՆՔ

§2 զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին՝ Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին՝ ՀՀ օրենքի նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ

Օրենքի նախագծի ընդունման կապակցությամբ անհրաժեշտություն է առաջանում լրացումներ կատարել Կառավարության 2018թ. ապրիլի 12–ի §Նպատակային ուսումնառության համար քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու և տրված տարկետումը դադարելու պայմանները սահմանելու մասին՝ N 430-Ն որոշման մեջ (հոդված 3), ինչպես նաև ընդունել ՀՀ վարչապետի որոշում՝ մարտական գործողությունների մասնակցի

կարգավիճակի վերաբերյալ եզրակացություն տվող միջգերատեսչական հանձնաժողով ստեղծելու և դրա կազմն ու աշխատակարգը հաստատելու մասին (հոդված 12)

ՏԵՂԵԿԱՆՔ

§2 ինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին՝ Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին՝ ՀՀ օրենքի նախագծի ընդունման կապակցությամբ ՀՀ պետական բյուջեի ծախսերի կամ եկամուտների ավելացման կամ նվազեցման վերաբերյալ

Օրենքի նախագծի ընդունումը ՀՀ 2019թ. և հետագա տարիների պետական բյուջեներում լրացուցիչ ծախսերի անհրաժեշտություն չի առաջացնում:

ՏԵՂԵԿԱՆՔ

§2 ինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին՝ Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին՝ ՀՀ օրենքի նախագիծը հրապարակային քննարկման ներկայացնելու վերաբերյալ

Օրենքի նախագիծը տեղադրվել է իրավական ակտերի նախագծերի հանրային քննարկման համար նախատեսված միասնական կայքում, առաջարկություններ չեն ներկայացվել:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2017 թվականի նոյեմբերի 15-ին

ԶԻՆԿՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

ՀՈՂՎԱԾ 5. ԶԻՆԿՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

8. Պայմանագրային զինվորական ծառայություն է համարվում զինված ուժերում եւ այլ զորքերում պայմանագրի հիման վրա կազմակերպվող ծառայությունը: Պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու պայմանագրերը կնքվում են 3-12 ամիս կամ ~~էրկու~~ **երկու կամ երեք կամ չորս** կամ հինգ տարի ժամկետով, իսկ ռազմաուսումնական հաստատություններ ընդունված քաղաքացիների հետ՝ տվյալ ռազմաուսումնական հաստատությունում ուսումնառության եւ հետուսումնական 10 տարի ժամկետով, որը պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասով ներառում է նաեւ ուսումնառության ժամանակահատվածը՝ որպես պարտադիր զինվորական ծառայություն:

ՀՈՂՎԱԾ 21. ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆԿՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԿԵԼՈՒ ՀԻՄՔԵՐԸ

5. Սույն հոդվածով չնախատեսված այլ հիմքով քաղաքացին կարող է բացառիկ դեպքերում ազատվել պարտադիր զինվորական ծառայությունից՝ Հայաստանի Հանրապետության

կառավարության որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով: *Սույն մասի համաձայն ներկայացված քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու դիմումը կարող է մերժվել Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական մարմնի կողմից՝ սույն մասի համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգում նախատեսված դեպքերում:*

ՀՈՂԿԱԾ 22. ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԶՈՐԱԿՈՉԻՑ ՏԱՐԿԵՏՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

3. Պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տրվում է նաև նպատակային ուսումնառության համար՝

1) Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատություններում բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի կամ ինտեգրացված կրթական ծրագրով առկա ուսուցմամբ սովորող քաղաքացուն, եթե նա Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հետ կնքում է քաղաքացիաիրավական բնույթի պայմանագիր՝ ուսումնառության ընթացքում զինվորական պատրաստություն անցնելու եւ ուսումնառության ավարտից հետո Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության նշած վայրում եւ պայմաններով զինվորական ծառայություն անցնելու մասին: Սույն կետի համաձայն՝ քաղաքացուն տարկետում տրվում է մինչեւ ուսումնառության ավարտի օրը ներառյալ, սակայն ոչ ավելի, քան նրա 26 տարին լրանալու օրը:

2) Հայաստանի Հանրապետությունում կամ օտարերկրյա պետություններում հանրակրթական, ինչպես նաև հիմնական կրթության հիմքի վրա առանց ընդհատման նախնական (արհեստագործական) *կամ միջին մասնագիտական* կրթական ծրագրերով սովորողին: Սույն կետի համաձայն՝ քաղաքացուն տարկետում տրվում է մինչեւ ուսումնառության ավարտի օրը ներառյալ, սակայն ոչ ավելի, քան նրա 19 տարին լրանալու օրը:

ՀՈՂԿԱԾ 26. ՇԱՐՔԱՅԻՆ ԵՎ ՍՊԱՅԱԿԱՆ ԿԱԶՄԵՐԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԶՈՐԱԿՈՉՎԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՇԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՅՐԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԿԱՐԳԸ

4. Հայտարարված զորակոչի ընթացքում շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչված եղբայրներն իրենց ցանկությամբ ծառայության են նշանակվում միեւնույն զորամասում, *որի դեպքում սույն հոդվածի 1-ին մասի համաձայն իրականացվող վիճակահանությանը մասնակցում է միայն մեկ եղբայրը:* Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվող եղբայր ունեցող շարքային կազմի պարտադիր զինծառայողն իր ցանկությամբ ծառայության է նշանակվում եղբոր ծառայության վայրի զորամասում, եթե շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվող եղբոր ծառայության ժամկետը չի գերազանցում 17 ամիսը *կամ եղբայրը պարտադիր զինվորական ծառայություն է անցնում այնպիսի զորամասում, որտեղ ծառայություն անցնելու համար անհրաժեշտ պայմանները չեն բավարարվում զորակոչվող եղբոր կողմից:*

ՀՈՂԿԱԾ 30. ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ԱՆՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԳՏՆՎԵԼՈՒ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՏԱՐԻՔԸ

1. Հայաստանի Հանրապետության զինված ուժերում եւ այլ զորքերում պայմանագրային զինվորական ծառայություն կարող են անցնել՝

1) 18 տարին չլրացած քաղաքացիները՝ ռազմաուսումնական հաստատություններ ընդունվելու դեպքում:

2) պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվող զինծառայողները, ներառյալ՝ սույն օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված անձինք:

3) նախկինում պայմանագրային զինվորական ծառայություն չանցած եւ մինչեւ ~~36 տարեկան~~ **40 տարեկան** պահեստազորում հաշվառված արական սեռի քաղաքացիները եւ իգական սեռի քաղաքացիները՝ անկախ պահեստազորում հաշվառված լինելու հանգամանքից, *ինչպես նաև*

պահեստագործի շարքային կամ կրտսեր ենթասպայական կազմերում հաշվառված մինչև 45 տարեկան քաղաքացիները՝ զորամասային օղակում ծառայության նշանակվելու դեպքում:

ՀՈՂՎԱԾ 32. ԱՌԱՋԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԿՆՔԵԼՈՒ ԿԱՐԳԸ

3. Առաջին պայմանագրի ժամկետը սահմանվում է՝

1) ոչ հրամանատարական շարքային խմբի զինվորական պաշտոնի նշանակվողի համար՝ երեք տարի:

2) հրամանատարական կազմի կրտսեր հրամանատարական խմբի կամ ոչ հրամանատարական կազմի կրտսեր սպայական կամ ավագ ենթասպայական կամ կրտսեր ենթասպայական խմբերի զինվորական պաշտոնների նշանակվողի համար՝ երեք տարի:

3) ռազմաուսումնական հաստատություն ընդունված զինծառայողների համար՝ համապատասխան ռազմաուսումնական հաստատությունում ուսումնառության եւ հետուսումնական 10 տարի:

4) ակադեմիական ուսումնառությունը կամ պետական լիազոր մարմնի պատվերով բարձրագույն կամ հետբուհական, ներառյալ՝ սույն օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ ուսումնական հաստատություններ ավարտած անձանց համար՝ ~~3-5 տարի~~ **2-5 տարի:**

5) պետական լիազոր մարմնի պատվերով միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ ավարտած անձանց կամ սպայական կամ սերժանտական դասընթացներ ավարտած զինծառայողների համար՝ 2-3 տարի:

ՀՈՂՎԱԾ 33. ՀԵՐԹԱԿԱՆ ԿԱՄ ՆՈՐ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿՆՔՄԱՆ ԿԱՐԳԸ

4. Նոր պայմանագիր կնքվում է նախկինում պայմանագրային զինվորական ծառայություն անցած, պահեստագործում հաշվառված եւ կրկին պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու ցանկություն հայտնած քաղաքացու հետ՝ հաշվի առնելով սույն օրենքի 30-րդ ~~հոդվածով~~ **հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերում ու 4-րդ մասում** սահմանված պայմանները:

ՀՈՂՎԱԾ 41. ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻՆ ԿԱԴՐԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԱԿ ԹՈՂՆԵԼԸ

1. Պայմանագրային զինծառայողները թողնվում են պետական լիազոր մարմնի կադրերի (կադրային ստորաբաժանման) տրամադրության տակ սույն օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) 2-րդ եւ 3-րդ կետերով սահմանված դեպքերում՝ ~~մեկ երկու~~ **ամսից** ոչ ավելի, իսկ հղիության եւ ծննդաբերության կամ երեխայի խնամքի համար արձակուրդում գտնվող պայմանագրային զինծառայողի հաստիքը կրճատվելու դեպքում՝ մինչեւ արձակուրդի ավարտը:

2) 4-րդ կետով սահմանված դեպքում՝ ~~մինչեւ տվյալ գործով վերջնական որոշման կայացվելը մինչև ընտրված խափանման միջոցը փոխելու կամ պաշտոնավարության ժամանակավոր դադարեցման որոշումը վերացնելու օրվան հաջորդող 30-րդ օրը~~, բայց ոչ ավելի, քան պայմանագրի ժամկետը լրանալը, իսկ զինծառայողի հետախուզման մեջ գտնվելու դեպքում՝ վեց ամսից ոչ ավելի, բացառությամբ ռազմաուսումնական հաստատություններ ավարտած զինծառայողների, որոնց պայմանագրով նախատեսված ծառայության ժամկետը չի ավարտվել:

3) 5-րդ կետով սահմանված՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով կալանքի ձեւով պատժի դատապարտվելու դեպքում՝ պատժի կրման ամբողջ ժամկետով:

4) 6-րդ կետով սահմանված դեպքում (ներառյալ՝ արձակուրդ ձեւակերպելու ժամկետը)՝ 1 ամսից ոչ ավելի:

5) 7-րդ կետով սահմանված դեպքում՝ երեք ամսից ոչ ավելի:

6) 8-րդ կետով սահմանված դեպքում՝ մինչեւ վերադառնալը կամ օրենքով սահմանված կարգով անհայտ բացակայող կամ մահացած ճանաչվելը:

7) 9-րդ կետով սահմանված դեպքում՝ մինչեւ ազատվելը:

8) 10-րդ կետով սահմանված դեպքում՝ մինչեւ ուսումնառության եւ սույն օրենքի 49-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հերթական արձակուրդի ավարտը:

1.1. *Սույն օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքում պայմանագրային զինծառայողը պետական լիազոր մարմնի կադրերի (կադրային ստորաբաժանման) տրամադրության տակ թողնվում է երկու ամսից ոչ ավելի ժամկետով:*

2. Պայմանագրային զինծառայողներին կադրերի (կադրային ստորաբաժանման) տրամադրության տակ թողնելու կարգը սահմանում է պետական լիազոր մարմնի ղեկավարը:

ՀՈՂՎԱԾ 42. ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՎԱՅՐ ՏԵՂԱՓՈԽԵԼԸ ԵՎ ԳՈՐԾՈՒԴԵԼԸ, ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԿԱՍԵՑՆԵԼԸ

6. Պայմանագրային զինծառայողը ծառայության նոր վայր մեկնում է գործերը եւ պաշտոնը հանձնելուց հետո՝ տեղափոխման հրամանն ստանալու օրվանից ոչ ուշ՝ քան 30-օրյա ժամկետում, բացառությամբ արձակուրդում, գործուղման կամ բուժման մեջ գտնվելու դեպքերի: *Սույն հոդվածի 1-ին մասում սահմանված դեպքերում պայմանագրային զինծառայողին ծառայության նոր վայր տեղափոխելու հրամանի բողոքարկումը, ներառյալ դատական կարգով, չի կասեցնում դրա կատարումը:*

ՀՈՂՎԱԾ 54. ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՐՁԱԿԵԼՈՒ ՀԻՄՔԵՐԸ

1. Պայմանագրային զինծառայողը զինվորական ծառայությունից արձակվում է՝

1) երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի իրավունք ձեռք բերելիս.

2) զինվորական ծառայության մեջ գտնվելու սահմանային տարիքը լրանալիս.

3) պայմանագրի ժամկետը լրանալիս.

4) առողջական վիճակի պատճառով զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչվելիս.

5) հաստիքների կրճատման, այդ թվում՝ ստորաբաժանման լուծարման դեպքում, եթե *առկա չէ թափուր այլ զինվորական պաշտոն կամ* զինծառայողը համաձայն չէ նշանակվելու այլ զինվորական պաշտոնի եւ չունի սույն օրենքով սահմանված պարտադիր զինվորական ծառայության չծառայած ժամկետ.

6) սույն օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին եւ 2-րդ կետերով նախատեսված կադրերի տրամադրության տակ գտնվելու ժամկետը լրանալու դեպքում, եթե *առկա չէ թափուր այլ զինվորական պաշտոն կամ* զինծառայողը համաձայն չէ նշանակվելու այլ զինվորական պաշտոնի եւ չունի սույն օրենքով սահմանված պարտադիր զինվորական ծառայության չծառայած ժամկետ.

ՀՈՂՎԱԾ 58. ՊԱՀԵՍՏԱԶՈՐԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

4. Պատերազմական ժամանակի հաստիքների կցագրված քաղաքացիներին հաստիքով նախատեսված պարտականությունների կատարման մեջ ներգրավվումն իրականացվում է պետական լիազոր մարմնի եւ քաղաքացու միջեւ ~~Եթեք~~ ~~աճիք~~ *մեկ տարի* ժամկետով կնքվող պայմանագրի միջոցով: Սույն մասում նշված պայմանագիրը չի համարվում զինվորական ծառայություն անցնելու պայմանագիր: Քաղաքացու կողմից հաստիքով նախատեսված պարտականությունների իրականացման կարգը եւ պայմանները սահմանվում են պայմանագրով: Պայմանագրի ձեւը եւ պետական լիազոր մարմնի անունից պայմանագիրն ստորագրող իրավասու պաշտոնատար անձանց ցանկը սահմանում է պետական լիազոր մարմնի ղեկավարը:

ՀՈՂՎԱԾ 61. ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ

14. Ռազմաուսումնական կամ ոստիկանական ուսումնական հաստատություններն ավարտած եւ սկզբնական սպայական զինվորական կոչում ստացած զինծառայողների համար՝ մինչեւ պաշտոնի նշանակումը, իսկ ռազմաթշկական ուսումնական հաստատություններն ավարտած եւ ինտերնատուրայում կամ օրդինատուրայում *կամ պետական լիազոր մարմնի պատվերով*

ինտերնատուրայի կրթական ծրագրով սովորելու հրամանագրված զինծառայողների համար՝ նաեւ ինտերնատուրայում եւ օրդինատուրայում սովորելու ընթացքում, պաշտոնային դրույթաչափը հաշվարկվում է "Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված սպայական կազմի նվազագույն խմբի 2-րդ մակարդակի գործակցով:

ՀՈԴՎԱԾ 65. ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ

2. Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով եւ պայմաններով սպայական կազմի **և ավագ ենթասպայական կազմերի** պայմանագրային զինծառայողները կարող են բնակարան կամ բնակելի տուն ձեռք բերելու կամ բնակելի տուն կառուցելու նպատակով օգտվել մատչելի եւ արտոնյալ պայմաններով երկարաժամկետ հիփոթեքային վարկավորման պետական նպատակային ծրագրերից:

ՀՈԴՎԱԾ 72. ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԸ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ՀԱՎԱՍԱՐԵՑՎԱԾ ԱՆՁԻՆՔ

1. Սույն օրենքի 6-րդ բաժնի դրույթների կիրառման իմաստով՝ զինծառայողներ են համարվում Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ոստիկանության, ազգային անվտանգության, հանրապետական գործադիր մարմինների համակարգերում համապատասխան ծառայության մեջ գտնվող անձինք:

2. Զինծառայողներին հավասարեցված անձինք են՝

1) մինչեւ սույն օրենքի ուժի մեջ մտնելը վարժական հավաքների կանչված զինապարտները, ինչպես նաեւ սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո պահեստագորային պատրաստության շրջանակներում իրականացվող միջոցառումներին մասնակցող անձինք, որոնց վրա տարածվում են սույն օրենքի 64-րդ հոդվածի 5-րդ մասի, 65-րդ հոդվածի 3-րդ մասի, 66-րդ հոդվածի 1-ին մասի, 68-րդ հոդվածի, 69-րդ հոդվածի եւ 71-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները:

2) Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների մասնակցի կամ երկրապահ կամավորականի կարգավիճակ ունեցող անձինք, որոնց վրա տարածվում են սույն օրենքի 64-րդ հոդվածի 4-րդ եւ 5-րդ մասի, 65-րդ հոդվածի 3-րդ մասի, 66-րդ հոդվածի 1-ին մասի, 67-69-րդ հոդվածների եւ 71-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները:

3) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայողները, որոնց վրա տարածվում են սույն օրենքի 6-րդ բաժնի դրույթները, եւ հարկադիր կատարողները, որոնց վրա տարածվում են սույն օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները:

4) պաշտպանության հանրապետական գործադիր մարմնում, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունում եւ Հայաստանի Հանրապետության ոստիկանությունում քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոններ զբաղեցնող կամ քաղաքացիական հատուկ ծառայության կադրերի ռեզերվում գրանցված անձինք, որոնց վրա տարածվում են սույն օրենքի 64-րդ հոդվածի, 65-րդ հոդվածի 1-ին մասի, 67-69-րդ հոդվածների, 71-րդ հոդվածի 1-ին եւ 3-րդ մասերի դրույթները, ինչպես նաեւ պաշտպանության հանրապետական գործադիր մարմնում հայեցողական պաշտոն զբաղեցնող անձինք, որոնց վրա տարածվում են սույն օրենքի 64-րդ, **65-րդ հոդվածի 1-ին մասի**, 67-69-րդ հոդվածների դրույթները:

5) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարարական ծառայողները, որոնց վրա տարածվում են սույն օրենքի 64-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթները:

3. **Հայաստանի Հանրապետության պաշտպանության մասնակցած անձանց մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ տրվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի հրամանով՝ հաշվի առնելով միջգերատեսչական հանձնաժողովի եզրակացությունը:** Պաշտպանության բնագավառի պետական լիազոր մարմնի ղեկավարին կից կարող է գործել անհայտ կորածների հարցերով խորհրդատվական հանձնաժողով:

ՀՈԴՎԱԾ 73. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԵՎ ԵԶՐԱՓՈՎԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6. Մինչեւ սույն օրենքի ուժի մեջ մտնելը, "Զինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն, զինվորական ծառայության ընթացքում որպես բնակարանային պայմանների բարելավման կարիք

ունեցող հաշվառված, սակայն սույն օրենքի 65-րդ հոդվածն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ սեփականության իրավունքով անհատույց բնակարան **բնակարանային պայմանների բարելավում** չստացած զինծառայողների համար պահպանվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին սեփականության իրավունքով անհատույց բնակարան **բնակարանային պայմանների բարելավում** ստանալու իրավունքը: Սույն մասում նշված զինծառայողները կարող են սույն օրենքի 65-րդ հոդվածն ուժի մեջ մտնելու օրվանից հետո հրաժարվել սույն մասով սահմանված իրավունքից եւ օգտվել սույն օրենքի 65-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված նպատակային ծրագրերից:

7. Մինչեւ սույն օրենքի ուժի մեջ մտնելը, "Զինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն, զինվորական ծառայության ընթացքում որպես բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող հաշվառված, սակայն զինվորական ծառայության ընթացքում սեփականության իրավունքով անհատույց բնակարան **բնակարանային պայմանների բարելավում** չստացած եւ առողջության կամ տարիքի կամ երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի անցնելու կապակցությամբ զինվորական ծառայությունից սահմանված կարգով արձակված նախկին զինծառայողների համար պահպանվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին սեփականության իրավունքով անհատույց բնակարան **բնակարանային պայմանների բարելավում** ստանալու իրավունքը՝ **Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:**

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Ազգային ժողովի կողմից 1-ին ընթերցմամբ ընդունված «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների ներկայացրած առաջարկությունների

Հ/հ	Առաջարկության հեղինակը	Օրենքի նախագծի հոդվածը, մասը, կետը կամ ենթակետը	Առաջարկության բովանդակությունը	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ Հանձնաժողովի որոշումը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ ՀՀ կառավարության պաշտոնական ներկայացուցչի դիրքորոշումը
1.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Սասուն Միքայելյան	Լրացնել նոր 9-րդ հոդված	Սպայական կազմի զինծառայողներից ոմանք պլանային կարգով կամ ծառայողական անհրաժեշտությունից ելնելով ծառայության նոր վայր տեղափոխելու վերաբերյալ հրամանները բողոքարկում են ըստ վերադասության կամ դատական կարգով, որի հիման վրա կասեցվում է այդ հրամանների իրագործումը՝ մինչև բողոքարկման վերաբերյալ համապատասխան որոշման ընդունումը: Նշված հանգամանքը բավականին վատ ազդեցություն է ունենում	Առաջարկությունն ընդունվել է:	Ընդունվել է, նախագիծը լրացվել է նոր 9-րդ հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ §ՀՈՂՎԱԾ 9. Օրենքի 42-րդ հոդվածի 6-րդ մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն. «Սույն հոդվածի 1-ին մասում սահմանված դեպքերում պայմանագրային զինծառայողին ծառայության նոր վայր տեղափոխելու հրամանի բողոքարկումը, ներառյալ դատական կարգով, չի կասեցնում դրա կատարումը:»:

		<p>զինվորական ծառայության գործընթացի պատշաճ կազմակերպման վրա, որի կապակցությամբ առաջարկվում է օրենքի 42-րդ հոդվածի 6-րդ մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն.</p> <p>«Սույն հոդվածի 1-ին մասում սահմանված դեպքերում պայմանագրային զինծառայողին ծառայության նոր վայր տեղափոխելու հրամանի բողոքարկումը, ներառյալ դատական կարգով, չի կասեցնում դրա կատարումը:»</p>		
--	--	--	--	--